Հավելված 1

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ՝ «ԱՎԻԱԲՈՒԺ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ՀԱՍՑԵ՝ ք. Երևան, 0042 «ԶՎԱՐԹՆՈՑ» միջ. օկ.

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ՝ www.aviamed.am

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏ՝ armaviamed@rambler.ru
info@aviamed.am

1. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն «Ավիաբուժ» ԲԿ» ՓԲ Ընկերության/այսուհետ՝ Ընկերություն/ կանոնադրության և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջների՝ Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,

բ) Ընկերության միանձնյա գործադիր մարմին-գործադիր տնօրեն:

Ընկերությունը խորհուրդ չունի:

Հիմք՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 83 կետ 1 (բաժնետիրական ընկերություններում խորհուրդ ստեղծվում է 50 և ավելի բաժնետերերի դեպքում):

Ընկերության կողմից թողարկված բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ Կառավարության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը սովորական են:

2. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

1. Հաշվետու տարում գումարվել է 1/մեկ/ տարեկան ժողով: Ժողովը գումարվել է ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում:

2. Տարեկան ընդհանուր ժողովը անց է կացվել 28.06.2024թ.:

3. Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո: Տարեկան ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6/վեց/ ամսվա ընթացքում:

Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ժողովի գումարման մասին բաժնետիրոջը (Լիազորված անձանց) ծանուցվում է Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում: Օրակարգի և ԲԸԺ-ին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանվում է Ընկերության կանոնադրությամբ՝ հոդված 11.1:

4. Բաժնետերը հնարավորություն ունի ԲԸԺ-ին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով:

3. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ընկերությունը չունի խորհուրդ, ինչպես նաև դրա հետ կապված՝ ստեղծված հանձնաժողովներ, այդ թվում նաև աուդիտի հանձնաժողով:

4. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության գործադիր մարմինը հանդիսանում է գործադիր տնօրենը:

Գործադիր տնօրեն՝ անուն, ազգանուն՝	Լիլիթ Ղազարյան
Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝	27.08.1967թ.
Կրթություն՝	Բարձրագույն
Հիմնական որակավորում՝	ՈՒՁՀ բժիշկ
Ընկերությունում աշխատած տարիներ՝	01.09.1990 թ.-ից
Գլխավոր բժիշկ՝	10.08.2000թ.-ից
Գործադիր տնօրեն՝	01.02.2001թ-ից մինչ այսօր

5. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Համաձայն ՀՀ կառավարության 2012թ. մայիսի 31-ի թիվ 732-Ն որոշմամբ՝ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններում ներքին աուդիտի համակարգի ներդրման օրվանից, այդ կազմակերպություններում վերստուգող հանձնաժողովների՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածով սահմանված լիազորությունների կատարումը

վերապահվում է ընկերությունների բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումներին:

6. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերությունը չունի կորպորատիվ քարտուղար:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերությունում 2025 թվականին չի իրականացվել արտաքին աուդիտ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

8. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը ներկայացվելու և հաստատվելու է Բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ 2025 թվականի հունիսի 26-ին:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված Ընկերությանը վերաբերելի ամբողջական տեղեկությունները: